

Հայտարարություն

Կոտայքի մարզի Քասախի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

ա) Կոտայքի մարզի Քասախի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1) ապահովում է համայնքում սոցիալական աշխատողի պարտականությունները, իր իրավասության սահմաններում առաջարկություններ է ներկայացնում համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի խնդիրների լուծման ուղղությամբ, մասնակցում է համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված գործառույթների իրականացման աշխատանքներին, մասնակցում է համայնքում սոցիալական աջակցություն ստացողի անհատական սոցիալական ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին, պահպանում է իր կողմից սպասարկվող անձանց (ընտանիքներին) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը, առաջարկություններ է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման ուղղությամբ, առաջարկություններ է ներկայացնում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ, նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, իրականացնում է վճարովի հասարակական աշխատանքներ, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

Առնվազն միջնակարգ կրթություն, նախապատվությունը տրվում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացների մասնակիցներին և վերջինս ստացել է համապատասխան վկայական, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ունի ՀՀ «Սահմանադրության» «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի մասին», «Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

Մրցույթը կկայանա 2021թվականի հուլիսի 15-ին ժամը 11⁰⁰ - ին Քասախի համայնքապետարանի վարչական շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին
- արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 սմ չափի
- անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունման վերջնաժամկետն է 2021թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամը 9⁰⁰ -ից մինչև 18⁰⁰ -ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Քասախի համայնքապետարանի աշխատակազմում՝ հեռ. (098) 44-03-24 կամ ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի տարածքային կառավարման վարչություն, հեռ. (0223) 2-34-13, 2-73-01: